

2014թ. Խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 514 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2014թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 514 հարկ վճարողների 2013 և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2014թ. երկրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 881.8 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 10 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել են 3,8 %-ով և կազմել 252.4 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 112.7 մլրդ դրամ նախորդ տարվա նույն եռամսյակի 111,5 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 47.8 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 90.7 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2014թ.-ի երկրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների մոտ 51%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 197 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 98 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 1.3 մլրդ. դրամի չափով:
7. 01.07.2014թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 130.6 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 82.5 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 13.1 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 7.3 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 1.4 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 4584 մարդով կամ 3%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 11.1%: